Արմեն Աշմատի Հակոբյանը ծնվել է 03.18.1976թ-ին քաղաք Երևանում:

1998-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտը՝ <<Հաշվապահական հաշվառում և աուդիտ>> մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրայում և 2001-ին պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն, ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2004-ին Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, արժանացել է տնտեսագիտության դոցենտի գիտական կոչման:

2012 թվականի հուլիսին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն <<Վարձակալության հաշվառման և ֆինանսական կառավարման հիմնախնդիրները ՀՀ-ում>> թեմայով և ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի մասնագիտական խորհրդի որոշմամբ Արմեն Հակոբյանին շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան:

1998 թվականից դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում Հաշվապահական հաշվառում բանկերում, Ֆինանսական հաշվառում և այլ մասնագիտական առարկաներ: Արմեն Հակոբյանը հանդիսանում է ՀՊՏՀ 014 տնտեսագիտական խորհրդի անդամ, ինչպես նաև Հաշվառման և ֆինանսների վերաբերյալ 50-ից ավելի գիտական հոդվածների ձեռնարկների և մենագրությունների հեղինակ:

Համաձայն ՀՀ ԿԲ-ի կողմից տրված վկայականների՝ ունի բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի, ներդրումային

ֆոնդի կառավարիչի և օտարերկրյա ֆոնդի կառավարիչի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոններում աշխատելու իրավունք:

19.05.1998-ից աշխատել է «Հայգյուղփոխբանկ» կոոպերատիվում, ներկայիս «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ, զբաղեցնելով հետևյալ պաշտոնները ՝ 19.05.1998-03.01.2000-ը հաշվապահ, 03.01.2000-26.04.2002՝ ավագ հաշվապահ, 26.04.2002-20.01.2003՝ ներքին աուդիտի պատասխանատու, 20.01.2003-17.02.2003՝ Ներբանկային գործառնությունների բաժնի պետ, 17.02.2003-17.03.2003 գլխավոր հաշվապահի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, 17.03.2003-13.12.2006 գլխավոր հաշվապահի տեղակալ (09.09.2006թ. Վերանվանված «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ):
01.05.2003-31.13.2013 համատեղությամբ աշխատել է «ԱԳԲԱ Լիզինգ» ԼՎԿ-ում որպես գլխավոր հաշվապահ:

13.12.2006-27.02.2007-ը հանդիսացել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատարը, 27.02.2007-20.07.20015-ը՝ գլխավոր հաշվապահի տեղակալ: 08.01.2014-ից առ այսօր համատեղությամբ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ում զբաղեցնում է գլխավոր հաշվապահի պաշտոնը:
20.07.2015-ից Արմեն Հակոբյանը նշանակվել է, որպես «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ: